Հասմիկ Ամիրջանյան

ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (XVIII Դ. ՎԵՐՋ)

Բանալի բառեր – ռուսահայ թեմ, արքեպիսկոպոս, քաղաքական, ռուսական կառավարություն, արշավանք, պետականություն, Արցախի մելիքներ, ռազմական գործողություններ:

XVIII դ. վերջին քառորդի հայ ազատագրական պայքարի, հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ իր ակտիվ գործունեությամբ առանձնանում է եկեղեցական ականավոր գործիչ, ռուսահայ թեմի հոգևոր առաջնորդ արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը: Ապրելով Անդրկովկասի՝ Ռուսաստանի կողմից գրավման նախաշեմին ընկած ժամանակահատվածում, Հայաստանի ազատագրության բաղձանքներով տոգորված, նա դարձավ ռուսական իշխանությունների միջոցով Հայաստանի ազատագրության տեսակետի կրողն ու տարածողը, նախորդ ժամանակաշրջանի հայ ազատագրական պայքարի մարտիկների (Իսրայել Օրի, Հովսեփ Էմին և այլք) գործի շարունակողը:

XVIII դ. վերջի ռուս-թուրքական պատերազմների ընթացքում (1768-1774, 1787-1791) դեպի Անդրկովկաս արշավանքներ ձեռնարկելու և դիրքերն այնտեղ ամրապնդելու ծրագրի իրագործման ճանապարհին Հայաստանին ու հայերին առնչվող հարցերում ռուս պաշտոնյաները բանակցություններ էին վարում հայ գործիչների, այդ թվում՝ Հովսեփ Արղությանի հետ, ինչն արտահայտվեց նաև փոխադարձ նամակների, խնդրանք-դիմումների ու զեկույցների ձևով. «...թղթակցութիւններ ըրաւ (Հ. Արղությանը-Հ. Ա.) Ռուսաց տէրութեան պաշտօնատարներուն հետ, որոնցմէ կախում ունէր հայոց անդորրութիւնը և բարօրութիւնը...»[1]:

1780-ական թթ. սկսած՝ Արղությանը Պետերբուրգում մասնակցում է ռուս քաղաքական-ռազմական գործիչների հետ Հայաստանի վերաբերյալ խորհրդակցություններին: Հունվարի 1-ին հանդիպում է կայանում Արղությանի և գեներալ Իվան Գորիչի միջև (վերջինիս պետք է ուղարկեին Անդրկովկաս՝ ռուսական արշավանքն իրագործելու): Նա հայտնում է, որ ռուսները մտադիր են արշավանք սկսել՝ գրավելու մերձկասպյան շրջանները և վերականգնելու հայկական պետականությունը: Ամբողջ խոսակցության վերաբերյալ պահպանվել է Արղությանի օրագիրը[2]: Հունվարի 2-ին հանդիպում է կայանում ռուս նշանավոր զորավար Ալ. Սուվորովի

[1] Տե՛ս Յիշատակարան, կազմ.՝ Վ. Զարդարեան, հ. Ա, Կ. Պոլիս, 1910, էջ 52:
[2] Տե՛ս Աղանեանց Գիւտ, Դիւան հայոց պատմութեան, գ. Թ, Թիֆլիս, 1911, էջ 23: Армяно-русское отношения в VIII веке (այսուհետև՝ Армяно-русское отношения...), т. IV, Ереван, 1990, док. 90, с. 53.

և ցարական արքունիքում բարձր դիրք զբաղեցնող Հ. Լազարյանի ու Արղությանի միջև. «...ի վերայ նոյն նիւթոյն և ի վերայ երկրացն մերոց բազում հարցմունս արար մինչև ցերկու ժամս... յուսադրութիւն արար յոյժ, որպէս թէ նորոգելոց իցեն ի մեզ իշխանութիւն...»[1]: Հաջորդ օրը Հարավային Ռուսաստանի կառավարիչ իշխան Գրիգորի Պոտյոմկինն իր մոտ է հրավիրում Հ. Արղությանին և Հ. Լազարյանին: Նա հանգամանորեն հետաքրքրվում է հայության, Էջմիածնի կաթողիկոսության իրավիճակներով: Հայկական պետականությունը վերականգնելու հայ գործիչների խնդրանքներին պատասխանում է, որ դրա համար հարկավոր է հայոց կաթողիկոսի և երևելիների գրավոր խնդրագիրը:

Արղությանի հունվարի 13-ի հերթական տեսակցությունը Ալ. Սուվորովի հետ նվիրված էր Արցախի մելիքություններին: Հանդիպման մասին Արղությանը գրում է. «...նոյն գենարալ պօռօճիկ Սուվօրովն զմեզ աղայ Յովհաննէսիւն կոչեալ էր առ ինքն վասն տեղեկութեան կացութեանց և վարուց, նաև որպիսութեանց մէլիքացն մերոց...»[2]:

Այնուհետև Արղությանը հանդիպումներ է ունենում Նովգորոդի և Պետերբուրգի արքեպիսկոպոսներ Գաբրիելի, Սամուելի, Պլատոնի հետ, Պետերբուրգի բերդի բերդապահ, գեներալ-մայոր Ա. Չերնիշևի, գեն. Ա. Ալսուփովի, վիցեկանցլեր իշխան Ա. Կուրակինի և ռուսական ռազմական ու քաղաքական այլ գործիչների հետ: Իշխան Կուրակինի միջնորդությամբ տեսակցում է անգամ թագաժառանգ Պավելի հետ: Գ. Պոտյոմկինի հրավերով շրջում է Ցարսկոյե Սելոյում, ծանոթանում մայրաքաղաքի տեսարժան վայրերին, հոգևոր հաստատություններին, ներկա գտնվում բազմաթիվ հանդիսությունների ու տոնակատարությունների[3]:

1782 թ. դեկտեմբերի 21-ին Հյուսիսային Կովկասի բանակի գլխավոր հրամանատար, Գ. Պոտյոմկինի ազգական գեներալ Պավել Պոտյոմկինը Արղությանին գրում է հարցադրումների շարք պարունակող տասներեք կետից բաղկացած նամակ[4]: Նրանում քննարկվել են Անդրկովկաս ռազմարշավի նախապատրաստման և պարսկահպատակ հայկական հողերի ազատագրման շուրջ: Բանակցությունների հիմնական նպատակն է եղել ռուսների կողմից պարզել տեղում իրենց առաջխաղացման ու տեղի քրիստոնյաների ռազմական ու տնտեսական կարողություններն օգտագործելու հնարավորությունները: Արքեպիսկոպոսը դեկտեմբերի 28-ին կետ առ կետ գրավոր պատասխանում է գեներալի բոլոր հարցերին՝ հավաստիացնելով, որ ռուսական զորքն այստեղ ոչնչի պակաս չի զգա[5]: Արղությանը գրությամբ միաժամանակ տեղեկացնում է, որ Արցախի մելիքները պատրաստ են ապստամբել

---

[1] Տե՛ս Աղանեանց Գիւտ, նշվ. աշխ., գ. Թ, էջ 24: Армяно-русское отношения..., док. 90, с. 152-153:
[2] Նույն տեղում, էջ 153:
[3] Տե՛ս Աղանեանց Գիւտ, նշվ. աշխ., գ. Թ, էջ 27-36:
[4] Նամակի ամբողջական տեքստը Տե՛ս Армяно-русское отношения..., док. 177, с. 196:
[5] Տե՛ս Армяно-русское отношения..., док. 125, с. 203-207, Иоаннисян А., Рсссия и армянское освободительное движение в 80-ых годах XVIII столения, Ереван, 1990, с. 41.

խանի դեմ, հենց որ օգնության հույս ունենան և այդ մասին տեղյակ են պահել իրեն՝ որպես «իրենց գործերի գլխավոր հոգևոր միջնորդի»[1]:

Պ. Պոտյոմկինի հետ Հայաստանի վերաբերյալ բանակցությունները շարունակվեցին Գեորգիևսկում[2], ուր գեներալն ինքն էր արքեպիսկոպոսին կանչել՝ քննարկելու Հայաստանի վերաբերյալ հարցերը: Այստեղ ռուս և հայ գործիչների միջև զրույցներ են ընթանում Հայաստանի քաղաքական կացության վերաբերյալ[3]:

Գեորգիևսկի ռուս-վրացական դաշնագրի կնքման ընթացքում հոգևոր հայրը, օգտվելով պատեհ հնարավորությունից, հայկական պետականությունը վերականգնելու հույսերով տոգորված՝ մի քանի զեկուցագրեր է ներկայացնում գեներալին, այդ թվում վերականգնվելիք հայկական պետության և Ռուսական կայսրության հարաբերություններին նվիրված դաշնագրի նախագիծ: Այն կրում էր «Կերպ դաշնադրութեան ի մէջ երկուց ազգաց՝ ռուսաց և հայոց» խորագիրը և ներկայացնում էր ավելի շուտ առաջարկ-ցանկություն՝ Հայաստանի ապագա քաղաքական կառուցվածքի, հայկական պետության ու ռուսական կայսրության փոխհարաբերությունների և այլնի մասին[4]: Ռուսական կողմը դաշնագրին ի պատասխան հստակ հասկացրեց, որ Արդությանն ու իր կողմնակիցները պետք է չափավորեն իրենց պահանջները. «…թագաւորք ընդ թագաւորաց կարեն դնել զդաշինս, ազգի ձերում ով է թագաւորն որ համարձակիցի զդաշինս խնդրել…»[5]:

Այդուհանդերձ, դաշինքի ձախողումը չի պակասեցնում Արդությանի վստահությունն ու հավատը ռուսների նկատմամբ: Նա նամակներով ռուս ռազմական գործիչներին հերթական անգամ ներկայացնում է հայերի ծանր վիճակն օտար լծի տակ՝ արտահայտելով իր հույսերը ռուսական օգնության վերաբերյալ, հավաստիացնում է, որ հայերն անհամբերությամբ սպասում են ռուսական զորքի գալստյանը՝ նրանց օժանդակությամբ ազատագրվելու դառը ստրկությունից[6]: Իսկ հայ գործիչներին ու ժողովրդին հավաստիացնում է, որ շուտով ռուսների օգնությամբ կգա բաղձալի ազատությունը[7]:

Բայց Անդրկովկասում քաղաքական նոր հանգամանքների ի հայտ գալը փոխեց ռուսական արտաքին քաղաքականության նոր ուղղությունը: Անդրկովկասյան խաներն իրենց հպատակությունը հայտնեցին Ռուսաստանին: Վերջինս օգտվեց պատեհ հնարավորությունից՝ խաղաղ ճանապարհով լուծելու Անդրկովկասի գրավման հարցը: Նման պայմաններում նախատեսված արշավանքը հետաձգվեց,

---

[1] Տե՛ս Собрание актовъ, относящихся к обозрению истории армянского народа (այսուհետև՝ Собрание актовъ…), т. I, Москва, 1833, с. 59-60, Լեո, Յովսէփ կաթողիկոս Արդութեան, Թիֆլիս, 1902, էջ 122:

[2] Գեորգիևսկում 1783 թ. հուլիսի 24-ին կնքվեց ռուս-վրացական դաշնագիր, որով Քարթլի-Կախեթիի թագավորությունը մտնում է Ռուսաստանի հովանավորության տակ:

[3] Տե՛ս Иоаннисян А., նշվ. աշխ., էջ 89:

[4] Տե՛ս Աղանեանց Գիւտ, նշվ. աշխ., գ. Դ, 1899, 731-734, Հայոց պատմություն, հ. 3, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2010, էջ 168-169:

[5] Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. 2699, թթ.102-103:

[6] Տե՛ս Լեո, նշվ. աշխ., 137, Армяно-русское отношения…, док. 191, с. 296, док. 198, с. 303, док. 211, с. 321:

[7] Տե՛ս Արարատ, Էջմիածին, 1886, թիվ Դ, 173, Ղուկասյան Ս., Հովսեփ Արդությանը ռուսական զորքերի 1796 թ. անդրկովկասյան արշավանքի ժամանակ, ՊԲՀ, N 3, 1987, էջ 92:

ինչը Հ. Արղությանին տագնապի մեջ գցեց: 1784-1786 թթ. ընթացքում գրված նամակներում ակնհայտորեն զգացվում է նրա հիասթափությունն ու կասկածները՝ արդյո՞ք իրենց աղերսները բավարար են, որ ռուսական զորքը հասնի Հայաստան: 1785 թ. փետրվարի 25-ին, ապրիլի 18-ին և հուլիսի 15-ին Աստրախանից Պ. Պոտյոմկինին ծանուցում է Գանձակի իրադարձությունների վերաբերյալ, գրում է, որ լեզգիները հաճախ են ասպատակում Վրաստանը, տեղեկություններ է տալիս Շուշու, Նախիջևանի, Դերբենդի, Խոյի և այլ վայրերի խաների ռազմական գործողությունների վերաբերյալ[1]: Պ. Պոտյոմիկինից խնդրում էր, որ եթե Իբրահիմ խանն ընդունի ռուսական հպատակություն, ապա մելիքները «...լինիցին նոքա ինքնագլուխ և միայն կախեալ ի հրամանս նորին արքայական մեծութեան Հերակլայ»[2]:

Փաստորեն, Արղությանը փորձում էր ամեն կերպ չթուլացնել հայ-ռուսական հարաբերությունները, թեև ինքն էլ զգում էր, որ այդ ուղղությամբ ջանքերը մեծ արդյունք չեն տալիս: Իսկ երբ սկսվեց ռուս-թուրքական երկրորդ պատերազմը (1787-1791), օրակարգից հանվեցին Հայաստանի հետ կապված խնդիրները: Վրաստանում գտնվող ռուսական զորքերը զորակազմի հրամանատար Ս. Բուռնաշովի գլխավորությամբ ետ կանչվեցին Անդրկովկասից:

Այդուհանդերձ, պատերազմը նոր հույսեր առաջացրեց Արղությանի մեջ: 1787 թ. հունվարի 3-ին հնդկաբնակ Ծ. Շահամիրյանին Արղությանի գրած նամակից տեղեկանում ենք, որ ռուսական կայսրուհի Եկատերինա II-ը (1762-1796) նպատակադրվել է շրջագայել նորանվաճ տարածքներով՝ Քերսոն, Ղրիմ և այլն, իսկ Նոր Նախիջևանում ճոխ ընդունելություն է նախապատրաստվում թագուհուն դիմավորելու համար: Թե ինչ ոգևորությամբ, միաժամանակ անհանգստությամբ էր Արղությանն սպասում կայսրուհու գալստյանը, ակնհայտ է այդ ընթացքում տարբեր մարդկանց՝ Ամենայն հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցուն, Ծ. Շահամիրյանին, Վրաստանի ու Կ. Պոլսի իր բարեկամներին և այլոց գրած նամակներից[3]: Հնարավոր է, որ նա կրկին անգամ ցանկացել է Հայաստանի ազատագրության, կամ գոնե ռուսական հովանավորության տակ անցնելու վերաբերյալ խոսակցությունը վերաբացել թագուհու հետ: Ուստի մեծ էր նրա հիասթափությունը, երբ իմացավ, որ թագուհու գալուստը չեղյալ է համարվել. «բայց ավաղ մերոց անբաղտութեանն, որ թագուհին չկամեցաւ գալ յայս կողմանք վասն չէրքէզու, ջրին և ծանրութեանն օդոյն»[4],-խորին դառնությամբ գրում է արքեպիսկոպոսը:

Այդ ընթացքում մելիքներն Արղությանից խնդրում են Պ. Պոտյոմկինին ներկայացնել իրենց օրհասական վիճակը[5]: Արքեպիսկոպոսը հերթական անգամ փորձեր է անում ռուս քաղաքական ու ռազմական գործիչների ուշադրությունը հրավիրել Արցախի վրա. 1788 թ. հունվարի-ապրիլ ամիսներին խնդրագրեր է հղում Գ. Պոտյոմկինին և գեներալ Ի. Գորիչին (որին նախատեսվում էր ուղարկել Անդրկովկաս՝

[1] Армяно-русское отношения..., док. 220, с. 332, док. 221, с. 331-332, док. 224, с. 334:
[2] Նույն տեղում, док. 211, с. 321:
[3] Տե՛ս Մատենադարան, ձեռ. 2699, թթ. 126-127, 129, 130-131, 138, 154, Ազդարար, Մադրաս, N 1, 1794, էջ 19:
[4] Տե՛ս Մատենադարան, ձեռ. 2699, թ. 145:
[5] Տե՛ս Собрание актовь..., ч. II, Москва, 1838, с. 62:

ռուսական արշավանքն իրագործելու), ինչի արդյունքում ռուս և հայ գործիչների միջև նորից բանակցություններ են սկսվում Հայաստանի և տարածաշրջանի վերաբերյալ[1]:

Բայց Հյուսիսային Կովկասում ռազմական գործողություններ են սկսվում Թուրքիայի դեմ, ինչի պատճառով Ի. Գորիչի գլխավորությամբ նախատեսված արշավանքը չի իրականանում: 1788 թ. հուլիսի 30-ին մելիքներին հղած նամակից զգացվում է, որ Արղությանը ռուսական զենքի հետ այլևս հույսեր չի կապում. «...Չկարծեմ ի յայսմ միջոցի օգնութիւն ինչ լինի ձեզ աստի, եթէ կարէք այլ իմն դուռն գտնել և բաղխել և կամ նորին արքայական մեծութեանն (վրաց թագավոր Հերակլ II-Հ. Ա.) աղաչել օգնել ձեզ...»[2]:

1789 թ. ռուսական զորքերի ընդհանուր հրամանատար Գ. Պոտյոմկինի հրավերով գնալով ռուս-թուրքական պատերազմի դաշտ Արղությանը ռուս սպաների հետ քննարկեց հայ ժողովրդի վերաբերյալ բազում հարցեր, ինչի մասին 1790 թ. հունվարի 22-ին տեղեկացնում է կաթողիկոս Ղուկաս Կարնեցուն. «Ընկալաւ զմեզ մեծ յարգանօք (Գ. Պոտյոմկինը-Հ. Ա.) և խոստացավ խնդրանացն մերոց առնել կատարումն»[3]:

Պատերազմում ռուսական զորքերի հաղթանակները Անդրկովկասի ժողովուրդների մեջ Ռուսաստանի օգնությամբ թուրք-պարսկական լուծը թոթափելու նոր հույսեր արթնացրեց: Հաղթանակից հետո Պ. Պոտյոմկինը գրություն է հղում Արղությանին՝ ամբողջ հայ ազգին ուղղված, որի օրինակը վերջինս ուղարկում է կաթողիկոսին: Իսկ 1790 թ. հունվարի 23-ին Արղությանը հերթական զեկուցագիր է ներկայացնում իշխ. Գ. Պոտյոմկինին Հայաստանի, այդ թվում Արցախի մելիքությունների մասին[4], ինչը վերջինիս միջնորդությամբ ներկայացվում է կայսրուհուն:

1793 թ. մայիսին Արղությանը ռուսական զորքի նոր հրամանատար Պլատոն Զուբովին գրած նամակում հիշեցնում է Գ. Պոտյոմկինի հետ ձեռք բերված համաձայնությունները Հայաստանի վերաբերյալ[5]: Ի պատասխան 1794 թ. Պ. Զուբովը գրում է. «Ձեր Սրբազնութեան յարգելի գրութիւնները, այլ և այլ ժամանակ ընդունելով կը պատասխանեմ ձեզ... իմ կողմանէ կը հաւատացնեմ ձեր Սրբազնութիւնը, որ այդ ազգին համար արժե ամենայն տեսակ աղէկութիւն անել, և ես չեմ ուշացներ՝ ըստ ձեր գրագրութեանց՝ նոցա բոլոր պիտոյքը կարողութեանս չափ հոգալու...»[6]:

1795 թ. կեսերին պարսից Աղա Մամադ խանի կողմից Թիֆլիսի ավերումից հետո ռուսներն արշավանք ձեռնարկեցին դեպի Անդրկովկաս: Նոյեմբերի 27-ին Հերակլ II-ին գրած նամակից տեղեկանում ենք, որ Արղությանը նամակ է գրել կոմս Պլատոն Զուբովին՝ նրա ուշադրությունը հրավիրելով Անդրկովկասի վրա[7]: Բացի այդ, Պ. Զուբովին, գեներալներ Ի. Գուդովիչին և Ի. Սավելիևին գրած նամակնե-

---

[1] Տե՛ս Մատենադարան, ձեռ. 2699, թ. 155, 159:
[2] Տե՛ս Մատենադարան, ձեռ. 2699, թ. 173:
[3] Աղանեանց Գիւտ, նշվ. Աշխ., գ. Թ, 103:
[4] Տե՛ս Մատենադարան, ձեռ. 2699, թ. 174-175, Собрание актовь..., ч. II, с. 61-62:
[5] Տե՛ս Армяно-русское отношения..., док. 265, с. 396-398:
[6] Յիշատակարան, կազմ.՝ Վ. Զարդարեան, հ. Ա, Կ. Պոլիս, 1910, էջ 52:
[7] Տե՛ս Մատենադարան, ձեռ. 2951, թ. 83-85:

ռում ներկայացնում է Հայաստանի և Վրաստանի ազատագրման վերաբերյալ իր դատողություններն ու առաջարկությունները, խնդրում անաջակից չթողնել քրիստոնյաներին: Գեներալ Ի. Գուդովիչն Արղությանին պատասխանում է, որ ընդունելի է համարում նրա առաջարկները և անհրաժեշտ բոլոր կարգադրություններն արել է՝ ռուսական զորքի արշավանքն ապահովելու համար[1]:

Դեպի Անդրկովկաս կատարվող ռազմարշավը հաջող իրականացնելու համար ռուսական իշխանությունները ձգտում էին օգտագործել ռուսական կողմնորոշում ունեցող գործիչների ուժերը, նրանց ազդեցությունը: 1796 թ. փետրվարի 19-ին Պ. Զուբովը պատասխան նամակում Արղությանին առաջարկում է միանալ ռուսական արքունիքի կողմից իր եղբայր իշխան Վալերիան Ալեքսանդրովիչի հրամանատարությամբ Պարսկաստան ուղարկվելիք զորագնդին՝ աջակցելու նրան իր խորհուրդներով[2]:

Արղությանը մեծ ցանկություն ուներ մասնակցելու իրադարձություններին, քանի որ անբավարար ծանոթությունը տեղանքին և տեղական պայմաններին ռուսներին կարող էր անցանկալի հետևանքների հանգեցնել. «...երբ ես կոմսի հետ խոսեցի (Վ. Զուբովի) Երևանի մասին, նա, անտեղյակ լինելով հանգամանքներին, անուշադրության մատնեց: Բայց դա շատ կարևոր գործ է: Ահա այդ և այլ պատճառների հետևանքով անհրաժեշտ է, որ ես շտապեմ բանակ»[3]: Արղությանի սույն տողերը արտահայտում են նրա գործելակերպի դրդապատճառները:

Արղությանը կատարեց խոստումը, գնաց Ղզլար՝ արշավող բանակի շտաբ. «գրաֆ Վալերիան Ալէքսանդրիչը ընդունեաց մեզ մեծ հարգանոք և խոսեցաք վասն մեր աշխարհաց, մելիքների...»[4]: Իսկ հոկտեմբերին միացավ գեներալ-մայոր Ա. Ռիմսկի-Կորսակովի հրամանատարությամբ գործող զորաջոկատին, որը պետք է միանար Թիֆլիս հասած ռուսական զորքին[5]: Ռիմսկի-Կորսակովին տրված հրահանգում խոսվում էր նաև Երևանը Վրաստանին միացնելու և Արցախի մելիքներին վրաց թագավորից կախման մեջ դնելու մասին: Գեներալին խորհուրդ էր տրվում օգտվել հայոց արքեպիսկոպոսի միջնորդությունից՝ քրիստոնյաներին համոզելու աջակցել ռուսական զորքի հաղթանակին: Արղությանի կոչով տեղի գյուղացիությունը սատար կանգնեց ռուսական զորքին, իսկ խաները չդիմադրեցին նրանց[6]:

1796 թ. նոյեմբերին Եկատերինա կայսրուհու վախճանից հետո նոր գահ բարձրացած Պավել (1796-1801) կայսրը նկատի ունենալով երկրի ֆինանսական ծանր դրությունը, ինչպես նաև Անգլիայի դիրքորոշումը ռուսական արշավանքների նկատմամբ՝ հրամայեց ռուսական բանակին վերադառնալ: Անդրկովկասը դարձյալ մատնվեց ճակատագրի կամքին, տեղի ժողովուրդների, առաջին հերթին հայերի

---

[1] Տե՛ս Армяно-русское отношения..., док. 281, с. 414-415, док. 287, с. 423, док. 288, с. 424, док. с. 298, 435-439:
[2] Տե՛ս Собрание актовъ..., ч. III, 1838, с. 337-338, Армяно-русское отношения..., док. 285, с. 418:
[3] Ղուկասյան Ս., նշվ. աշխ., 1987, 87:
[4] Մատենադարան, ձեռ. 2951, թթ. 89, 116:
[5] Տե՛ս Собрание актовъ..., ч. III, 1838, с. 338-339:
[6] Տե՛ս Մատենադարան, ձեռ. 2951, թ. 125, Աղանեանց Գիւտ, նշվ. աշխ. գ. Ա-Բ, 1893, 30, էջ Լէօ, նշվ. աշխ., էջ 159, Собрание актовъ..., ч. III, с. 341:

հույսերն ու սպասումները այս անգամ էլ չարդարացան: Լսելով, որ ռուսական բանակը պատրաստվում է նահանջել՝ գրավված շրջանների հայ բնակչությունը տագնապ ապրեց, քանի որ արտահայտել էր իր համակրանքը ռուսներին և օժանդակել նրանց. «Աստուած մի արասցէ, եթէ դարձ լինի զօրաց թագաւորին, մեք մնալոց լինեմք. ոչ թէ առաջին կեղեքութիւնն է լինելոց, չարաչար պատժելոց են զմեզ»[1],- գրում են Արղությանին Դերբենդի հայերը և խնդրում են միջնորդել ռուսական կառավարությանը՝ թույլատրելու իրենց անցնել ռուսական սահմանը: Գաղթել ցանկացող հայերին դրամական և այլ կարգի օգնություն ցույց տալու համար Արղությանի դիմումներին ի պատասխան Ի. Գուդովիչը 1796 թ. մարտի 23-ի նամակով տեղեկացնում է՝ բոլոր նրանք, ովքեր նվիրված են եղել Նորին գերազանցություն գահին, զորքի հետ կմտնեն ռուսական սահմանը[2]:

Արղությանը շարունակեց նամակագրական հարաբերությունները ռուս ռազմական գործիչների ու բարձրաստիճան պաշտոնյաների հետ՝ վերսկսելով իր միջնորդություններն ու խնդրանքները: Քաղաքական գործընթացներն իրենց հերթին նպաստում էին ռուս-հայկական հարաբերությունների ամրապնդմանը: Սենատի անդամ, իշխան Վ. Կոչուբեյին գրում է մելիքների ներկա ծանր դրության մասին[3]:

Հ. Արղությանի և Հ. Լազարյանի հետ արքունիքի քաղաքական շփումները կրկին աշխուժացան 1798 թ., երբ վրաց Գեորգի XII-ը, չկարողանալով շտկել երկրի քաղաքական ու տնտեսական ներքին անկայուն իրավիճակը, դիմեց ռուսների օգնությանը, ինչի արդյունքում 1799 թ. ռուսական ռազմարշավ նախատեսվեց դեպի Թիֆլիս: 1801 թ. Արղությանի մահով կանխվեցին հետագա բանակցությունները:

Այսպիսով, Հ. Արղությանը հայության փրկության ուղին տեսնելով ռուսական կայսրության Անդրկովկասյան արշավանքների ու զենքի ուժով Հայաստանն ազատագրելու մեջ, ամեն միջոցի դիմեց, որ իրականություն դառնա ռուսական արշավանքը՝ այդ նպատակով բանակցություններ վարելով ռուսական արքունիքի ու ռուս բարձրաստիճան զորահրամատարության հետ: Անձամբ գտնվելով ռուսական բանակում՝ նա ամեն պատեհ առիթով արծարծում էր Հայաստանի ազատագրության հարցը, նամակների միջոցով մշտապես նրանց ուշադրությունը սևեռում Հայաստանի ու Արցախի նվաճման կարևորության և օգտակարության վրա: Միշտ չէ, որ ռուս քաղաքական ու ռազմական գործիչները պատրաստակամ էին արձագանքել հայ արքեպիսկոպոսի նամակներին. դրանք շատ հաճախ մնում էին անպատասխան[4], սակայն հոգևոր հայրը դրանից չէր վիրավորվում՝ լավ գիտակցելով, որ ռուսական արքունիքը կովկասյան պետությունների ազատագրության հարցում առաջնորդվում էր քաղաքական իրական շահերով, իսկ ինքը արքունիքի համար ծառայում էր որպես լավագույն զենք՝ Անդրկովկասի նվաճման ճանապարհին: Վերջ ի վերջո, Արղությանի բանակցությունների նպատակակետը Հայաստանի պետականության վերականգման խնդիրն էր: Նրա նամակներն ու զեկույցները չա-

[1] Ղուկասյան Ս., նշվ. աշխ., էջ 93:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս Армяно-русское отношения…, док. 347, с. 500:
[4] Տե՛ս Армяно-русское отношения…, док. 220, 332, док. 224, с. 334:

փազանց հետաքրքիր են հայ-ռուսական հարաբերությունների պատմության ուսումնասիրման տեսանկյունից:

Асмик Амирджанян, Переговоры между архиепископом Иосифом Аргутяном и русскими политическими и военными деятелями об освобождении Армении (в конце XVIII в.), - Видный государственный и религиозный деятель архиепископ Иосиф Аргутян всячески поднимал вопрос освобождения Армении из-за чужеземного ига в кругах русского военного руководства. Архиепископ, как сторонник русской ориентации, отправлял множество рапортов и писем руководствам русского военного ведомства, пытаясь привлеч их внимание на этот вопрос. Эти письма очень интересны для изучения истории армяно-русских отношений.

Hasmik Amirjanyan, The Agreements between Archbishop Hovsep Arghutyan and the Russian Political and Military Figures (at the End of the 18th Century), - The prominent political and religious figure Archbishop Hovsep Arghutyan using his ties raised the question of the national liberation struggle for Armenia in the circle of Russian military authorities. The Russian-oriented Archbishop sent a lot of reports and letters to Russian military figures, trying to attract their attention in this question. These letters are very interesting for studying the history of Armenian-Russian relations.

Հասմիկ Ամիրջանյան – պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ-ի պատմության ինստիտուտի գիտաշխատող: